ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1002-Ա « 03 » մայիսի 2023 թ.

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարանի կողմից 13.03.2023 թվականին հայտարարված ԵՔ-ԳՀԱՊՁԲ-23/15 ծածկագրով սննդի ծանրոցների ձեռքբերման ընթացակարգին հայտեր ներկայացրած «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» և «Վիլնյուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները (այսուհետ՝ Մասնակիցներ) խախտել են գնման ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունները, այն է՝ Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են եղել անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ. ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ 23.03.2023 թվականին Մասնակիցներին ծանուցվել է հրավերով սահմանված ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, Մասնակիցների կողմից սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել: Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի հ.526-Ն որոշմամբ սահմանված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 42-րդ կետով՝ Մասնակիցների հայտերը գնահատել է անբավարար և մերժել է: Կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը 26.04.2023 թվականին հրապարակվել է տեղեկագրում:

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով.

1. «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» և «Վիլնյուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետի վրա:

3.Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Լ.Հովհաննիսյանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

X

ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Signed by: HOVHANNISYAN LEVON 2903880441